

Տույժի չեղարկում՝ պայմանավորված COVID-19 համավարակով

Հաճախ տրվող հարցեր (ՀՏՀ)

Պատրաստվել է Լոս Անջելես վարչաշրջանի հարկային մարմնի կողմից

1. Կարո՞ղ եմ դիմել տույժի չեղարկման համար, եթե COVID-19 համավարակի պատճառով չեմ կարողացել ժամանակին կատարել վճարումը:

Պատասխան. այո: Սկսած ապրիլի 11-ից, երբ գույքահարկի վճարման վերջնաժամկետը լրանա, այն հարկատուները, որոնք COVID-19 համավարակով պայմանավորված պատճառներով ժամանակին չեն կարողացել վճարել հարկերը, կարող են մեր կայքի միջոցով տույժի չեղարկման հայտ ներկայացնել: Վարչությունը ձևավորել է հատուկ աշխատանքային խումբ, որը զբաղվելու է այդ հայտերի մշակմամբ:

2. Ի՞նչ է տեղի ունենում, եթե չեմ կարողացել վճարել մինչև ապրիլի 10-ը՝ վերջնաժամկետի ավարտը, սակայն կարող եմ հիմա մասնակի վճարում կատարել:

Պատասխան. վարչությունն ընդունում է մասնակի վճարումներ: Եթե կարող եք վճարել ձեր գույքահարկի մի մասը, խորհուրդ ենք տալիս այդպես անել: Այդ եկամուտը կօգնի կառավարությանը շարունակել աշխատել և տրամադրել հասարակությանն անհրաժեշտ կենսապահովման ծառայությունները, հատկապես՝ նման արտակարգ իրավիճակներում: Իսկ մնացորդային գումարի համար կարող եք մեր կայքում տույժի չեղարկման հայտ ներկայացնել:

3. Ի՞նչ պահանջների պետք է համապատասխանել COVID-19 համավարակով պայմանավորված տույժի չեղարկման հայտ ներկայացնելու համար:

Պատասխան. նահանգային օրենսդրությունը թույլ է տալիս մեզ հաշվի առնել հարկատուի հսկողությունից դուրս հանգամանքները, որոնք խոչընդոտ են հանդիսացել, որ հարկատուն ժամանակին կատարի գույքահարկի վճարումները: Ինդիքում ենք հայտնել ձեզ հետ պատահած որոշակի հանգամանքների մասին, որպեսզի ուսումնասիրենք դրանք: Մենք կուսումնասիրենք յուրաքանչյուր հայտն ըստ տվյալ դեպքի:

4. Ինչպե՞ս եմ ներկայացնում COVID-19 համավարակով պայմանավորված տույժի չեղարկման հայտը:

Պատասխան. Այցելե՛ք մեր կայք և սեղմե՛ք պատկերանշանին՝ [տույժի չեղարկում](#) պահանջելու համար: Հետևե՛ք ցուցումներին և լրացրե՛ք պահանջվող տեղեկությունները: Այս պահին ուղեկցող փաստաթղթեր ներկայացնելու կարիք չկա: Եթե որոշենք, որ ձեր հայտն ուսումնասիրելու համար մեզ լրացուցիչ տեղեկություններ են հարկավոր, ձեզ էլեկտրոնային նամակով ցուցումներ կուղարկենք:

5. Ինչպե՞ս եմ իմանում, որ ստացել եք COVID-19 համավարակով պայմանավորված տույժի չեղարկման իմ հայտը:

Պատասխան. տույժի չեղարկման հայտը հաջողությամբ ուղարկելուց հետո, առցանց հայտի էջում կցուցադրվի ձեր հայտի հաստատման համարը, որը

Տույժի չեղարկում՝ պայմանավորված COVID-19 համավարակով

Հաճախ տրվող հարցեր (ՀՏՀ)

Պատրաստվել է Lnu Անջելես վարչաշրջանի հարկային մարմնի կողմից

Կարող եք պահել ձեզ համար: Բացի այդ, ձեր հայտի հաստատման համարը էլեկտրոնային փոստով կստանաք հայտը ներկայացնելիս ձեր նշած էլեկտրոնային հասցեին:

6. Որքա՞ն կունի COVID-19 համավարակով պայմանավորված տույժի չեղարկման իմ հայտի մշակումը ձեր կողմից:

Պատասխան. տույժի չեղարկումների ուղղությամբ մենք սովորաբար աշխատում ենք 45-60 օր, սակայն ելնելով հանրության առողջության համար ստեղծված ներկա արտակարգ իրավիճակից՝ ակնկալում ենք գործընթացի ուշացումներ:

7. Երբ հարկային մարմինն ավարտի COVID-19 համավարակով պայմանավորված տույժի չեղարկման իմ հայտի մշակումը, որքա՞ն ժամանակ կունենամ գույքահարկը վճարելու համար:

Պատասխան. հաշվի առնելով հանրության առողջության համար ստեղծված ներկա արտակարգ իրավիճակը՝ այս պահին չենք կարող որևէ ժամկետ նշել: Հիմնվելով յուրաքանչյուր դեպքի առանձնահատկության վրա՝ մենք կապ կհաստատենք յուրաքանչյուր հարկատուի հետ, հարկատուին կտեղեկացնենք հայտի վերաբերյալ կայացված որոշման մասին, կվերանայենք հնարավոր վճարման տարբերակները և կսահմանենք վճարման ժամկետ՝ ելնելով հարկատուի անհատական հանգամանքներից:

Վճարման բոլոր տարբերակների մասին մանրամասն տեղեկանալու համար [ՍԵՂՄԵԼ ԱՅՍԵՂ:](#)

Կարող եք նաև զանգահարել մեզ 213-974-2111 հեռախոսահամարով կամ այցելել մեր կայք հետևյալ հղումով՝ ttc.lacounty.gov:

Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ զանգերի քանակի ավելացման պատճառով սպասման ժամանակը կարող է երկարել: Բացի այդ, մեր կայքում կան ինքնուրույն լրացման հայտի ձևեր, ինչպես նաև կարող եք որոնել վճարումների պատմությունը և պահանջել գույքահարկի հաշվի կրկնօրինակը: